

նաև ներկայ բոլորս — պարզապէս պիտի նշանակէր Քաղաքներու կողմէ ոչխարներու պէս բնաջնջման դատաւարտել զանոնք: Ոչ մէկ օսմանցի պիտի ընդունէր այդ կարգի անարդարութիւն մը:

Հետեւաբար երբ Հայերուն, ուրիշ տարրերու օրինակին վրայ, զինուած ըլլալը նկատուի խռովութեան կամ ապստամբութեան նշան մը. կարելի չէ ընել այդ առանց արդարութիւնը և ողջմտութիւնը բռնաբարելու: Եւ հարկադրուած ենք ընդունելու որ, Ատանայի զէպքերը այնպէս էին որ Հայերը չէին կրնար չի հպտակիլ իրենց օրինաւոր ինքնապաշտպանութեան հրամայական պահանջին:

Անկասկած պիտի գայ օր մը՝ ուր սահմանադրական կառավարութիւնը յարգել պիտի տայ իր իշխանութիւնը հանդէպ թալանիչներուն և ոճրագործներուն և պիտի զինաթափ ընէ բոլոր Օսմանցիները: Այն ատեն ոչ ոք հարկ պիտի սեանէ մտածելու ինքնապաշտպանութեան վրայ: Սակայն համոզուած եմ որ, մինչեւ այդ երջանիկ օրուան ժամանումը, ո՛չ մէկ օրէնք, ո՛չ մէկ խիղճ՝ պիտի կրնար մեղադրել Հայերը՝ իրենց օրինաւոր ինքնապաշտպանութեանը համար:

Այս չէ բոլորը:

Ամբողջ աշխարհ համաձայն է որ բացարձակ միապետութեան մը վերադարձի վտանգները դեռ կատարելապէս հեռացուած չեն: Հետեւաբար, ամէն օսմանցի, պարտաւոր է արթուն մնալ նման հաւանականութեան մը հանդէպ, և հակառակ պարագային, Սահմանադրութիւնը պաշտպանել զէնքով:

Ընդհանուրին ծանօթ է որ երկու հայ կուսակցութիւնները, Դաշնակցութիւն և Հնչակ, հաւասար իրրիւնք և թիրազրի, իրենց բոլոր ջանքերը կեդրոնացուցած են այս նուիրական պարտքին կատարման: